ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն որոշման նախագիծը կազմվել է համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով հաստատում է համայնքի զարգացման ծրագրերը, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հունվարի 12-ի N 01/16.2/80-18 հանձնարարականը և համայնքների տարեկան աշխատանքային պլանների մեթոդական ուղեցույցը :

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բարեփոխումները, ինչպես նաև կառավարման այս մակարդակում գերակայությունների սահմանման, պլանավորման, կատարողականի մոնիթորինգի և գնահատման հարցերին նոր և արդյունավետ մոտեցումները դիտելով առանցքային՝ ստեղծվել է գործիք, որը կոչվում է «Համայնքի տարեկան աշխատանքային պլան (այսուհետ՝ ՏԱՊ)»:

Բյուրեղավան համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) այն գործիքն է, որը թույլ է տալիս հիմնավորված, փաստարկված (արդյունքային ցուցանիշների միջոցով) կերպով գնահատել ՏԻՄ-երի և համայնքում գործող այլ կազմակերպությունների կողմից իրականացված ծրագրերի արդյունավետությունը մեկ տարվա ընթացքում՝ հիմք ստեղծելով համայնքի զարգացման հնգամյա ծրագրի ճշգրտման և հաջորդ տարիների պլանավորման և բյուջետավարման համար:

Բյուրեղավան համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը բխում է համայնքի 2018-2022 թվականների զարգացման հնգամյա ծրագրով նախատեսված՝ 2018 թվականին իրականացվող ծրագրերից:

Բյուրեղավան համայնքի 2018 թվականի ՏԱՊ-ը համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:

Բյուրեղավան համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

- համակարգել ՏԻՄ-երի տվյալ տարվա անելիքները,
- սահմանել սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատել համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառել համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկել համախառն ռեսուրսները և բացահայտել պակասուրդը (դեֆիցիտը),

- համախմբել համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները ՀՀԶԾ-ով սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- շաղկապել նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- որոշակիացնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակել տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման ՄԳՊ-ը:

Բյուրեղավան համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 բաժիններից.

1-ին բաժնում սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

2-րդ բաժնում ներկայացվում է համայնքի 2018 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների):

3-րդ բաժնում ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2018 թվականի ծրագիրը:

4-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը:

5-րդ բաժնում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին» Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին» Բյուրեղավան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեում էական փոփոխություններ չեն նախատեսվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ